

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՐՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՂԵԼՆԻԿՈՎԱ ՌԻՏԱ ՎՅԱԶԵՍԼԱՎԻ

ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԽՄԲԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ.00.05-«Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»

մասնագիտությամբ

հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի

անվան հայկական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան

Պաշտոնական

ընդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Նաիրա Ռաֆիկի Հակոբյան
հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Հասմիկ Սոսի Հարությունյան

Առաջատար

Կազմակերպություն՝ Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ-ի

մարտի 4-ին, ժամը- 12:00-ին Խաչատուր Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող

ՀՀ ԲՈՀԻ- ի փիլիսոփայության և հոգեբանության թիվ 064

մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014թ. փետրվարի փետրվաի 3-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության

064մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, հոգեբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Կ. Ե. Վարդանյան

Հիմնախնդիր արդիականությունը: Պետականության և քաղաքացիական հասարակության կառուցման ներկա, անցումային փուլը իր բնականոն ընթացքով հատկանշվում է տարաբնույթ դժվարություններով՝ ցածր կենսամակարդակ, նյութատնտեսական պայմաններ, աշխատատեղերի պակաս, ցածր աշխատավարձ: Նոր տնտեսական հարաբերություններին հարմարվելը ընթանում է մեծ բարդություններով և հակասություններով, մարդը պաշտպանված չէ ո՛չ սոցիալապես, ոչ էլ իրավական ու հոգեբանական տեսանկյուններից, ինչպես նաև պակաս չեն քաղաքական գաղափարական խնդիրները: Հետխորհրդային շրջանում մեր հասարակության տեղի ունեցող տրանսֆորմացիոն փոփոխություններն առաջ բերեցին անկայունություն ոչ միայն սոցիալական, քաղաքական, տնտեսական, էկոլոգիական, գաղափարական ոլորտներում, այլ նաև լուրջ ճգնաժամային զարգացման մեջ հայտնվեց սոցիալական համակարգը, ինչն անխուսափելիորեն անդրադարձավ սոցիալապես անապահով խավի վրա: Հատուկ սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության և հոգածության կարիք ունի մասնավորապես մանկատների և հատուկ դպրոցների համակարգը:

Այսպիսի սոցիալական իրավիճակը (Ն.Հակոբյան, Ս. Գևորգյան, 2005) բնորոշ է վերափոխվող հասարակությամբ, որտեղ կատարվող փոփոխությունները, բարեփոխումները, վերակառուցումները երբեմն ուղեկցվում են որոշակի այլափոխումներով, մեր էքոսփերան անցանկալի երևույթներով: Հասարակության, տնտեսության և տնտեսական քաղաքականության մեջ կատարվող փոփոխությունները և այսպես կոչված՝ նորամուծությունները էլ ավելի են դժվարեցնում այն մարդկանց կեցությունն ու կենսագործունեությունը, որոնց կենսամակարդակը բավարարից չատ ցածր է և ոչ բարեկեցիկ, որոնք ծանրաբեռնված են սոցիալական հոգեբերով: Այդ համագամանքը մեզանում ծնել է մի նոր սոցիալական հիմնախնդիր: Արդյունքում, ըստ էության, ավելանում է մանկատների, ծնողազուրկ երեխաների, անտերունչ, թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների համար ժամանակավոր ապաստանների թիվը: Հոգեբանական ավանդական բնորոշմամբ ծնողազրկությունը սոցիալական երևույթ է՝ պայմանավորված հասարակության մեջ այն երեխաների առկայությամբ, որոնք կամ՝ ունեն ծնողների ֆիզիկական կորուստ (ծնողները մահացած են), կամ՝ զրկված են ծնողական խնամքից, հոգածությունից, կամ էլ ծնողները զրկված են ծնողական իրավունքից: Հաճախ երեխաների ծնողազրկությունը պայմանավորված է նաև նրանով, որ սահմանված կարգով ծնողները ճանաչված են անգործունակ, անընդիատ բացակայող և այլն: Մանկատները, հատուկ կարիքներ ունեցող երեխաների դպրոցները, ինչպես նաև այն բոլոր ձեռնարկությունները, որտեղ կրթվում և դաստիարակվում են ծնողական խնամքից զրկված, սոցիալապես բարձիթողի վիճակում գտնվող երեխաները, որպես կանոն, սակավ հուզականությամբ, ջերմությամբ և մտերմությամբ միջավայրեր են: Նշված համագամանքից բացի՝ մանկատան սաները հատկանշվում են և այն առանձնահատկություններով, որ նրանց մեծ մասը ունի ծնողներ, որոնք զրկված են ծնողական իրավունքից,

անբարենպաստ ընտանիքներից են, որտեղ խիստ լարված, սառը, անտարբեր, կամ էլ արդեն քրեածին և հանցածին հարաբերություններ են տիրում՝ հազեցված բռնություններով ու կոնֆլիկտներով, ինչի պատճառով ծնողներն ի վիճակի չեն լինում դաստիարակել իրենց երեխաներին, և վերջիններս հայտնվում են մանկատանը կամ սոցիալական այլ հաստատություններում: Նմանօրինակ երեխաները սոմատիկ և հոգեկան առողջության տեսակետից սովորաբար ունենում են ծանր ժառանգություն, պրենատալ շրջանի անբարենպաստ ընթացք, հոգեկան և երբեմն էլ ֆիզիկական վնասվածքներ: Նրանք հոգեբանական տեսակետից ռիսկի խումբ են համարվում:

Ծնողական խնամքից զուրկ երեխաների հոգեբանական հիմնախնդիրներին վերաբերող գիտական գրականության մեջ ուսումնասիրությունները սակավ են: Ծնողազուրկ երեխաների հետ կապված շփման ու հաղորդակցության, սոցիալական հարմարվողականության խնդրոտների, միջանձնային և միջխմբային կառուցողական փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման, բախումնային իրավիճակներով հազեցած փոխհարաբերությունների բացասական ներուժի մարման վերաբերյալ: Չեն հետազոտվել մանկատան երեխաների միջև ստեղծվող կառուցողական և դեստրուկտիվ միջանձնային և միջխմբային հարաբերությունները, դրանց կարգավորման, կառավարման հոգեբանական առանձնահատկությունները, միջանձնային և միջխմբային դեստրուկտիվ հարաբերությունների արդյունքում նրանց շրջանում առաջացած սոցիալական աղապատացիայի խնդիրները, որոնց ուսումնասիրությունն այսօր խիստ հրատապ է և արդիական:

Հոգեբանների, մանկավարժների և սոցիոլոգների (Ի.Լանգմեյեր, Զ.Մատեյչեկ, Զ.Ադալեյան-2001, Լ.Ս. Վիգոտսկի-1984, Տ. Գուսնա-2005, Լ.Գ. Ժեդունովա, Օ.Ն.Ուոտսոն- 2005, Բ.Ա. Զալեսինա, Օ. Սմիրնովա- 1985, Վ.Կ. Զարեցկի, Մ.Օ.Դուբրովսկայա, Վ.Ն.Օսլոն, Ա.Բ.Խոլմոգորովա- 2002, Կազան Վ. Ե.- 1995, Ա.Մ.Պրիխոժան, Ն.Ն. Տոլստիխ- 1991, Ի.Ա. Ֆուրմանովա, Ն. Վ. Ալադյին- 1990 և ուրիշներ) բազմաթիվ հետազոտությունները վկայում են այն մասին, որ ջերմ ու հոգատար ընտանեկան միջավայրից (առավել ևս անհաշտ, անբարենպաստ ընտանիքից) դուրս երեխայի հոգեկանի զարգացումն ու սոցիալական հասունությունն ընթանում են ինքնատիպ ուղիով, հոգեբանական յուրօրինակ օրինաչափություններով: Մանկատան և նմանատիպ այլ մանկական հիմնարկի պայմաններում այդպիսի երեխաների մեջ ձևավորվում են բնավորության և վարքի առանձնահատուկ գծեր, անձնային որակներ ու հատկանիշներ, բարոյական և իրավական համոզմունքներ, արժեքային և այլ սոցիալական կոդմոորոշումներ:

Եթե ընդհանրացնում ենք, ապա ստացվում է հետևյալ պատկերը. մանկատան սաներից յուրաքանչյուրը յուրովի դժբախտ է, այսպես կոչված՝ անհաջողակ, որը կրել է հոգեկան, երբեմն էլ ֆիզիկական տրավմա, ունի թերարժեքության բարդույթ ու կարոտ է եղել հոգատար մարդկային վերաբերմունքի, մեծ զգուշավորությամբ է վերաբերվում շրջապատին, անհարգալից վերաբերմունք ունի ծնողների նկատմամբ: Դրա հետևանքով նրանց համար հեշտ չէ միջանձնային

հարաբերություններ ստեղծելը, համատեղ վարք դրսևորելը և գործունեություն ծավալելը, որովհետև նրանց մեջ այդպիսի ունակություններ չեն ձևավորել: Մինչդեռ ըստ անվանի հոգեբանների (Բ. Գ. Անան, Ա. Ն. Լեոնտև, Լ. Ն. Բոժովիչ, Ս. Վ. Ռուբինշտեյն, Լ. Վիգոտսկի, Վ. Ն. Մյասիչև, Ա.Ա. Բոդալով և ուրիշների) անհատը անձնավորություն է դառնում սոցիալական շփման ընթացքում: Մարդկային հարաբերությունների ստեղծման և դրանց կարգավորման հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտա մշակելու նրանց նկատմամբ անհատական մոտեցման սկզբունքներ ու մեթոդներ՝ նրանց սոցիալական ու հոգեբանական ադապտացիան և սոցիալական կյանքին նախապատրաստվելու շուրջ աշխատանքները արդյունավետ դարձնելու նպատակով: Այս հանգամանքը նույնպես հիմնավորում է ատենախոսական թեմայի ընտրությունը և արդիականությունը:

Յետազոտության գիտական վարկածը: Յետազոտության մեջ առաջ է քաշվել այն կանխադրույթը, որ ծնողազուրկ երեխաների կառուցողական միջանձնային և միջխմբային հարաբերությունների ձևավորումն ու դետերմինացիան կախված է ծնողազուրկության օբյեկտիվ պատճառականությունից (իրական և սոցիալական) բխող երեխայի անձնային-անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմամբ: Կապված ծնողազուրկ երեխաների օբյեկտիվ պատճառականության հետ (իրական և սոցիալական)՝ ենթադրվում է, որ իրական և սոցիալական ծնողազուրկության կարգավիճակում գտնվող երեխաները բնորոշվում են հոգեբանական տարաբնույթ և տարաբովանդակ բնութագրերով, սոցիալական ադապտացիայի, շփման և հաղորդակցության հմտություններով, միջանձնային և միջխմբային փոխհարաբերություններով:

Յետազոտության օբյեկտը միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Յետազոտության առարկան մանկատան սաների միջանձնային և միջխմբային հարաբերությունների գործընթացի կարգավորումն է:

Գիտական վարկածը ստուգելու և հաստատելու համար հետազոտությունը հետապնդել է հետևյալ **հիմնական նպատակը:** Բացահայտել հոգեբանական առանձնահատկությունները, որոնք ապահովում են ծնողազուրկ երեխաների միջև միջանձնային և միջխմբային հարաբերությունների ստեղծումն ու դրանց կարգավորումը նրանց հաղորդակցման, ուսուցման և գործունեության ընթացքում, կոնֆլիկտային հարաբերությունները նախազգուշացնելու և հաղթահարելու նպատակով:

Յետազոտության առջև դրվել են հետևյալ հիմնարար խնդիրները՝

- ուսումնասիրել ծնողական խնամքից զուրկ երեխաների հոգեբանական առանձնահատկությունները, ներկայացնել մասնավորապես մանկատան սաների հոգեբանական բնութագիրը.

- տարբերակված և տարանջատված մոտեցում ցուցաբերել մանկատան երեխաների հանդեպ ըստ նրանց ծնողական խնամքից զուրկ գտնվելու հանգամանքի ու դրդապատճառների (իրական և սոցիալական), ադապտիվացման ցուցանիշների և հարաբերությունների մեջ մտնելու դրդապատճառների.
- փորձարարական հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում պարզել միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների սկզբունքները, շարժառիթներն ու դինամիկան.
- բացահայտել մանկատան սաների անբարենպաստ փոխհարաբերությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառականությունը.
- հոգեբանական մեխանիզմներ և գործնական հանձնարարականներ մշակել երեխաների համագործակցային վարքի հմտությունների մարզման, կոնֆլիկտային փոխհարաբերությունների մախականիման և հաղթահարման ուղղությամբ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Թեպետ ծնողական խնամքից զուրկ գտնվող երեխաների՝ իբրև սոցիալական երևույթի մանկավարժական և սոցիալական վիճակը բարձիթողության առումով շարունակաբար տարբեր հետազոտությունների առարկա է եղել, այդուհանդերձ հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանական ամբողջական և համապարփակ տեսություն դեռևս չի ձևավորվել՝ բացառությամբ առանձին տեսական դրույթների և տեսակետների:

Հիմնախնդրի վերաբերյալ մեր կողմից կատարված հետազոտության արդյունքում բացահայտված հոգեբանական առանձնահատկություններն ու օրինաչափությունները կնպաստեն ծնողական խնամքից զուրկ գտնվող երեխաների շփման և հաղորդակցության հմտությունների, միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների վերաբերյալ հոգեբանական տեսությունների համալրմանն ու հարստացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքի արդյունքների կիրառելիությունը հնարավորություն կընձեռի բարենպաստ ներգործություն ունենալ մանկատան սաների և ծնողական խնամքից զուրկ գտնվող երեխաների՝ իբրև հասարակության լիարժեք և լիիրավ անդամների սոցիալականացման գործընթացին՝ նրանց շրջանում ձևավորելով կառուցողական միջանձնային և միջխմբային փոխհարաբերություններ ու հաղորդակցական հմտություններ: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինեն մանկատան մանկավարժների և դաստիարակների մանկավարժական գործունեության, հատկապես մանկավարժական հաղորդակցման և մանկավարժական համագործակցության, ինչպես նաև երեխաների շեղվող վարքի մախականիման և հաղթահարման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքներում:

Հետազոտության նորույթ:

- Կատարված հետազոտության արդյունքում տարբերակվել են ծնողազուրկ երեխաների կարգավիճակային պատճառականության **իրական և սոցիալական** տարատեսակները:

- Տարորոշվել են ծնողագուրկ երեխաներից յուրաքանչյուրին բնորոշ, կարգավիճակային պատճառականությունից բխող հոգեբանական առանձնահատկությունները:
- Բացահայտվել է դեստրուկցիայի առկայության հոգեբանական պատճառականությունը ծնողագուրկ երեխաների միջանձնային և միջխմբային փոխհարաբերություններում:
- Վեր են հանվել սոցիալական դեզադապտացիայի հոգեբանական պատճառականությունը և վարքային նորագոյացությունները ծնողագուրկ երեխաների շրջանում:
- Նախանշվել են ծնողագուրկ երեխաների միջանձնային և միջխմբային կառուցողական փոխհարաբերությունների ստեղծմանն ու ամրակայմանը նպաստող մեխանիզմներ:

Չետագոտության ընթացքում կիրառված մեթոդները՝ անհատական փաստաթղթերի ընդհանրացման, վարքի և գործունեության արդյունքների վերլուծության, կենսագրական, դիտման, հարցաթերթիկի, սոցիոմետրական մեթոդները, աֆֆիլիացիայի ախտորոշման մեթոդիկան՝ մշակված Ա. Մեհրաբյանի կողմից, անձի բազմակողմանի հետազոտության մեթոդիկան՝ մշակված Գ. Բ. Բերյոզինի, Մ. Պ. Միրշինիկովի և Ե. Յ. Սոկոլովի կողմից, մոտիվացիոն նախադասությունների ուսումնասիրության մեթոդիկան՝ մշակված Լ. Բոժովիչի և Յ. Շվանցերի կողմից, «Ընտրի ճիշտ դեմքը» մանկական տագնապայնության թեստը՝ մշակված ամերիկացի հոգեբաններ Ռ. Թեմփլի, Մ. Դոուլինի և Վ. Ամենի կողմից, «Ռենե-ժիլի» միջանձնային հարաբերությունների բացահայտման պրոյեկտիվ մեթոդիկա, «Անչափահասների դրական և բացասական դիրքորոշումների փորձարարական ախտորոշման պատմվածք իրադրությունների մեթոդիկան մշակված Ս. Արզումանյանի կողմից, «Սեփական անձն ու ուրիշների ոչ համարժեք ընկալումը» ախտորոշող մեթոդիկան՝ մշակված Ա. Արզումանյանի կողմից, «Անչափահասների անձի ուսումնասիրության և նրանց վերադաստիարակության» մեթոդական ծրագիր՝ մշակված Ս. Արզումանյանի կողմից:

Չետագոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը՝

Չետագոտության ընթացքն ու ստացված արդյունքները քննարկվել են Գավառի մանկատան և թիվ 1 հատուկ դպրոցի մանկավարժական խորհուրդներում, հաջատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերում, Գավառի պետական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի նիստերում և մի շարք գիտաժողովների ընթացքում:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները՝

1. Ռեֆերենտային խմբերից ընտանիքի բացակայությունը և հուզական դեպրիվացիան հանգեցնում են ծնողագուրկ երեխաների հոգեբանության և վարքի, միջանձնային և միջխմբային հարաբերությունների յուրօրինակ դրսևորումների:
2. Կապված ծնողագուրկ երեխաների կարգավիճակի օբյեկտիվ պատճառականության հետ՝ տարբերակվում են «իրական և

սոցիալական ծնողազրկություն» եզրույթները՝ վերջիններիս բնորոշ հոգեբանական առանձնահատկություններով:

3. Ծնողազուրկ երեխաների հոգեկանում դոմինանտ է հուզական-զգացմունքային գործոնը, աֆֆիլիատիվ պահանջմունքը, որի զերակայությամբ են պայմանավորված նրանց միջանձնային և միջխմբային հարաբերությունների յուրահատուկ դրսևորումները:
4. Ծնողական խնամքից զուրկ գտնվելու արդյունքում առաջ եկած հոգեբանական խնդիրների, մասնավորապես հուզական դեպրիվացիայի և տարաբնույթ ֆրոստրացիաների առկայությամբ են պայմանավորված ծնողազուրկ երեխաների միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների դեստրուկտիվ դրսևորումները, սոցիալական ադապտացիայի դժվարությունները, վարքային նորագոյացությունները:
5. Ծնողազուրկ կարգավիճակը ենթադրում է զգացմունքային դեպրիվացիայի գործոնների առկայություն, ինչով էլ պայմանավորվում են երեխաների հոգեբանական խնդիրները՝ տազմապախոշություն, երկփեղկվածություն, անորոշություն, կոնֆլիկտայնություն ու ագրեսիվություն՝ պատճառ դառնալով շփման, հաղորդակցության և միջանձնային հարաբերությունների աղճատմանն ու աղավաղմանը:
6. Մանկատան երեխաների հոգեկանի մշտադիտարկման, շտկողական, վերականգնողական աշխատանքների պարբերաբար իրականացումը հնարավորություն է ընձեռում ծնողազուրկ երեխաների բարեհաջող սոցիալականացման, հոգեբանական ադապտացիայի և կառուցողական միջանձնային և միջխմբային հարաբերությունների զարգացման համար:

Հետազոտության տեսական և գործնական դրույթների հուսալիությունը և հիմնավորվածությունը: Ապահովված են հիմնահարցի վերաբերյալ տեսական մոտեցումներն ու մեթոդաբանությունը հետազոտության նպատակներին համարժեք մեթոդների ընտրությունը, ուսումնասիրվող համակազմի քանակը, ստացված արդյունքների հոգեբանական վերլուծությունը:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 170 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հուսալիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխը՝ **«Մանկատան սաների փոխհարաբերությունների որպես հոգեբանական հետազոտության հիմնախնդիրը»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում քննարկվում են մանկատան սաների ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Մարդկանց միջև հարաբերությունները կամ նրանց փոխհարաբերությունները եղել են հոգեբանության դասականների գիտական ուսումնասիրության առարկան, որին նվիրվել են բազմաթիվ հիմնարար աշխատություններ: Հոգեբանության մեջ այդ առաջնային հիմնախնդիրը մշակել են անվանի հոգեբան Բ. Գ. Ամանը, հոգեբանության մեջ հարաբերությունների (վերաբերմունքների) տեսության հիմնադիր Վ. Ն. Մյասիչևը և նրա աշակերտ Ա. Գ. Կոպալովը, սոցիալական ընկալման, մարդու կողմից, մարդը որպես անձնավորության ընկալման տեսության հիմնադիր Ա.Ա.Բոդալովը, սոցիալական հոգեբանության հիմնական բնագավառի՝ շփման, հաղորդակցման հիմնախնդրի մշակման առաջատար մասնագետներ Բ. Ֆ. Լոմովը, Ա. Ն. Լեոնտևը, Բ. Դ. Պարիգինը, Գ. Ս. Անդրեևան, Լ. Անցիֆերովան, Ա. Վ. Պետրովսկան, մանկան հոգեբանության մեջ Ա. Վ. Ջապորոժեցը, Վ. Ի. Լիսինան, Լ.Ի.Բոժովիչը, ժամանակակից հոգեբաններից Ա. Ա. Ռեանը, Ա.Գ. Մակլակովը, Դ. Ի. Ֆելդշեյնը, Ս. Ջ. Արզումանյանը, Ս. Ռ. Գևորգյանը, Ն. Ռ. Հակոբյանը, Ռ. Ս. Նեմովը և այլ հեղինակների կողմից: Մանկատան սաների և հատուկ կրթարաստիարակչական այլ հիմնարկներում երեխաների փոխներգործությունները, փոխհարաբերությունները առավել չափով իմաստավորելու համար ժամանակին տեսական հիմքեր են ստեղծել Լ. Ի. Բոժովիչը, Բ. Ա. Ալեմասկինը, Գ. Գ. Բոչկարյովան և ուրիշներ, որոնք հատկապես բացահայտել են աշակերտների ուսումնական ակտիվությունը և շրջապատում գրանցված նրանց սոցիալական դիրքը: Միջանձնային հարաբերությունների կազմավորման և դրսևորման ընթացքի վրա որոշակիորեն ազդում են երեխաների հուզական վիճակը, որի խաթարումները հուզական անհավասարակշռության և անկայունության տեսքով վառ արտահայտվում են կրտսեր և դեռահասության տարիքում, հատկապես դաստիարակության խնդիրներ ունեցողների շրջանում: Բոլոր դեպքերում, այս ոլորտին վերաբերող մասնագիտական գրականության վերլուծությունը հստակ ցույց է տալիս ծնողի, ընտանեկան ջերմության, հուզական շփման բացառիկ դերը երեխայի միջանձնային և միջխմբային հարաբերությունների ձևավորման գործընթացում:

Երկրորդ ենթագլխում՝ «Մանկատան սաների փոխհարաբերության ուսումնասիրության հիմնախնդիրները տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ», տրվում է ծնողական խնամքից զրկված երեխաների փոխհարաբերությունների հիմնախնդիրների վերաբերյալ պատմական ակնարկ, տարիքային և մանկավարժական հոգեբանության ուսումնասիրության համատեքստում: Հասարակության զարգացմանը զուգընթաց առաջացել է անապաստան, ծնողական խնամքից զրկված, մանկավարժորեն բարձիթողի վիճակում գտնվող երեխաների հիմնախնդիրը, որի սկիզբը անվանի չեխ հետազոտողներ Ի. Լանգմեյերը և Ջ. Մատեյչեկը համարում են IV դարը կամ 335 թվականը, իսկ առաջին հիմնարկը՝ համարում 787 թվականին Միլանում բացված

դաստիարակչական տուևը: Անկախ նրանից, թե դարերի ընթացքում ինչքանով և ինչպես է փոխվել վերաբերմունքը ծնողագուրկ ու անպաշտպան երեխաների նկատմամբ, այսօր էլ, ըստ Ա. Մ. Պրիխոժանի և Ն. Ն. Տոլստիխի, նման հիմնարկներում երեխաները հետ են մնում զարգացման և սոցիալական հասունացման մեջ, ունեն լուրջ հուզական խաթարումներ, հաճախ հիվանդանում են, և ցածր չէ մահացության մակարդակը: Հետզհետե այդ հիմնախնդիրը դառնում է գիտական հետազոտության առարկա: Այս առումով վճռորոշ դեր են խաղում XX դարի կեսերին հոգեբաններ Դ. Բոուլբիի և Ռ. Լալիցի կատարած ուսումնասիրությունները, որոնք ապացուցեցին ծնողական խնամքի դերի կարևորագույն նշանակությունը երեխայի համար:

Երկրորդ գլուխը՝ «Մանկատան սաների միջանձնային հարաբերությունների փորձարարական հետազոտություն», կազմված է չորս ենթագլուխներից:


Առաջին ենթագլուխում քննարկվում են հետազոտության կազմակերպման հարցերը: Հետազոտությունը կազմակերպվել է մի քանի փուլերով, որոնցից մեկը նախահետազոտական կամ ծանոթացման փուլն է: Այս փուլում մենք ծանոթացել ենք մանկատան հատուկ դպրոցի պայմաններին, նրանց մանկավարժական աշխատանքի կանոնակարգին, հիմնարկի ներքին կարգուկանոնին, պարզապես մեզ համար կատարել որոշ դիտումներ երեխաների շփման, խաղի, դասընթացի և հանգստի ժամանակ: Մեզ հաջողվել է փոքր-ինչ մոտիկից ծանոթանալ այդ հիմնարկի գործառույթներին, կյանքին ու գործունեության Գավառի պետական համալսարանի ուսանողների՝ մանկավարժական պրակտիկան իրականացնելու ժամանակ, որի ընթացքում էլ ծագեց ատենախոսական թեմայի մտահղացումը, ինչպես նաև հնարավորություն ենք ունեցել՝ ուսումնասիրելու ծնողագուրկ երեխաների միջանձնային և միջամբային հարաբերությունները և կարգավորման հոգեբանական առանձնահատկությունները: Հետազոտության մեջ ընդգրկվել են հատուկ դպրոցի 39 և մանկատան 76 երեխաներ՝ սկսած չորս տարեկանից մինչև 17 տարեկանը, որոնք տարբեր տարիքային խմբերի են բաժանվել, և ընդհանուր թիվը կազմել է 115 երեխա:

Երկրորդ ենթագլուխում քննարկվում է մանկատան սաների ընդհանուր հոգեբանական բնութագիրը: Ծնողական խնամքից զրկված երեխաների ընդհանուր հոգեբանական բնութագրի առանցք են կազմում ըստ մեզ, նրանց վարքագծային դրսևորումները: Ռեսուրսների ընթացքում նկատել ենք, որ անձնային և վարքագծային դրսևորումներով է պայմանավորված այն հանգամանքը, որ ծնողական խնամքից զրկված երեխան դժվար է հարմարվում շրջապատին, դժվարությամբ է մտնում փոխհարաբերությունների մեջ հասակակից այն երեխաների հետ, որոնք ապրում են բարենպաստ միջավայրում, ծնողների ու հարազատների հոգածության ներքո: Մեր կողմից հետազոտված իրական և սոցիալական որբերը, հատկապես մանկավարժորեն և սոցիալապես բարձիթողի վիճակում գտնվող, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաները, որոնց ընտանիքներում տիրել է լարված և քրեածին մթնոլորտը, և դրա արդյունքում ծնողը զրկվել է ծնողական իրավունքից կամ ազատագրվել, հատկանշվում են մի ընդհանուր հոգեբանական առանձնահատկությամբ


ևս, որը վերաբերում է նրանց հուզական ոլորտին, հուզական զարգացմանը: Ինչպես մեր ուսումնասիրությունը, այնպես էլ բազմաթիվ այլ հետազոտություններ փաստում են, որ մանկատան սաները հուզականորեն անհաղորդ են, մարդկանց, նրանց հոգսերի և իրադրությունների նկատմամբ անտարբեր:

Երրորդ ենթազկխում ներկայացվում են մանկատան և հատուկ դպրոցի սաների տարբերակումը ըստ որբության ադապտիվության և ընտրության մոտիվացիոն ցուցանիշների: Ծնողական խնամքից զրկված երեխաներին ճանաչելու, նրանց հետ անհատական աշխատանքներ ծավալելու և նրանց միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նրանց տարբերակել ըստ որբության ցուցանիշների: Դրա նպատակն էր՝ բացահայտել երեխայի սոցիալական կարգավիճակը խմբում կամ մանկատան կոլեկտիվում, զբաղեցրած դիրքը, գրաված տեղը հասակակիցների շրջանում: Այս գործոններով են պայմանավորված երեխաների միջև ստեղծվող հարաբերությունները, միջանձնային ընտրությունների դրդապատճառները:


Ըստ դաստիարակության և ընդհանուր զարգացման մակարդակի ցուցանիշների



Ըստ սոցիալական ադապտիվության ցուցանիշների



Ըստ սոցիալական վարքի նորմատիվության ցուցանիշների



Չորրորդ ենթագլխում հոգեբանական վերլուծության են ենթարկվել հետազոտության արդյունքները: Մեր կողմից կիրառված մեթոդներն ու միջոցները նպատակաուղղված են եղել բոլոր այն հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանը, որոնք այս կամ այն չափով նպաստում կամ խանգարում են մանկատան և հատուկ դպրոցի երեխաների միջև միջանձնային հարաբերությունների կազմավորմանը և

դրանց կարգավորմանը, կոնֆլիկտների նախագգուշացմանը: Այդ նպատակով օգտագործված հոգեբանական ավանդական և այլ մեթոդները հնարավորություն են տվել պարզելու ծնողական խնամքից զրկված երեխաների կյանքի ուղու, նրանց հոգսերի, հետաքրքրությունների, ցանկությունների, ձգտումների ու պահանջումների, միջավայրի և երեխաներին հարմարվելու առանձնահատկությունների մասին:

Երրորդ գլուխը՝ «Երեխաների անբարենպաստ փոխհարաբերությունների կարգավորման և կանխարգելման հոգեբանական ուղիներ», կազմված է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը վերաբերում է մանկատան սաների անբարենպաստ փոխհարաբերությունների օբյեկտիվ պատճառականության բացահայտման: Քանի որ ծնողական խնամքից զրկված երեխաների սխալ, անհիշատ, ոչ նորմատիվ կամ դեհանտ վարքի պատճառները բազմաթիվ և բազմաբնույթ են, և երբեմն դժվար է սահմանազատել, թե որտեղ է ավարտվում օբյեկտիվ պատճառը և սկսվում սուբյեկտիվը, ուստի մենք, հենվելով հետազոտության տվյալների վրա, աշխատել ենք պայմանականորեն նշել օբյեկտիվ այն գործոնները, որոնցով որոշակիորեն պայմանավորվում են անբարենպաստ գործոնների հոգեբանական ընդհանրացումներն ու մեկնաբանությունները, այնուհետև փնտրել և ընտրել համարժեք ուղղիչ – դաստիարակչական մեթոդներ և միջոցներ սաների հարաբերությունները կարգավորելու, ընկերական միջավայրում ճիշտ կողմնորոշվելու համար:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է մանկատան սաների անբարենպաստ փոխհարաբերությունների սուբյեկտիվ պատճառների վերլուծությանը: Հետազոտության ընթացքում, հատկապես սաների հետ անձնական շփումների և հոգեբանական զրույցների արդյունքում մենք բացահայտել ենք անբարենպաստ անձնային գործոնների մի խումբ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում անբարենպաստ հոգեվիճակների դրսևորումներում: Դրանց կազմում հատկապես առանձնանում են հոգեբանական անհավասարակշռությունը, դյուրագրգռությունը, ներքին տազնապայնությունը, հուսահատությունը, անհուսալիությունը, անորոշությունն ապագայի նկատմամբ, ընկճվածությունը, խուճապի հակվածությունը, ագրեսիվությունը և այլն: Մանկատան սաների մոտ այդ հոգեվիճակները կայուն բնույթ չեն կրում, բայց գրեթե նրանց մեծ մասին հատուկ է պարբերաբար անբարենպաստ հոգեվիճակի մեջհայտնվելը, երբ հջշում են հարազատներին, կարոտում նրանց, հիշելով անցած լավ և վատ օրերը երազում են ապագայի մասին և հաճախ ցանկություն են ունենում մեկուսանալ, առանձնանալ, մնալ սեփական մտքերի, մտորումների հետ միայնակ:

Երրորդ ենթագլուխը վերաբերում է իրական և սոցիալական որբերի փոխհարաբերությունների հոգեբանական յուրահատկություններին: Հոգեբանական յուրահատկությունը, որը նկատվում է իրական և սոցիալական որբերի շփումներում, միջանձնային հարաբերություններում

արտահայտվում է նրանում, որ նրանք գիտակցում են իրենց սոցիոնետրական կարգավիճակը, և ըստ այդմ նրանց միջև վերաբերմունք է ստեղծվում մեկը մյուսի նկատմամբ: Իրական որբերը, գիտակցելով իրենց լքված, բարձիթողի լինելը, այն, որ իրենցով ոչ ոք չի հետաքրքրվում, անհրաժեշտության դեպքում իրենց ոչ մեկը չի պաշտպանում, որ իրենք ոչ մեկին պետք չեն, իրենց մեջ աստիճանաբար կուտակվում են բացասական լիցքեր ու ապրումներ, ինչը բերում է նրան, որ նրանք ատելությամբ են լցվում ծնողներ ունեցող երեխաների նկատմամբ, ագրեսիվ գործողություններ են կատարում նրանց հանդեպ և այլն: Մյուս կողմից այդ երեխաները չեն հանդիպում բարյացակամ վերաբերմունքի սոցիալական որբերի կողմից, որոնք համարում են, որ իրենք առավելություններ ունեն իրական որբերի նկատմամբ, ծագում են իշխել նրանց վրա: Արդյունքում որոշակիորեն լարվում են միջանձնային հարաբերությունները իրական և սոցիալական որբերի միջև, դրանք լինում են թե ակնհայտ և թե քողարկված: Լարված թշնամական վերաբերմունք են դրսևորում հատկապես իրական որբերը սոցիալական որբերի նկատմամբ: Ագրեսիվությունը, դեստրուկտիվ վարքը մանկատան երեխաների հաջորդ հատկանշական հոգեբանական յուրահատկությունն է, որը մեծապես խոչընդոտում է նրանց միջանձնային հարաբերություններին, ինչպես նաև մանկավարժներին և հոգեբաններին դաստիարակչական և շտկողական աշխատանքով: Այդ երևույթը հատկապես բնորոշ է սեռական հասունացման շրջան ապրող դեռահասներին, որտեղ կենսաբանական և հոգեբանական փոփոխությունները միատեղվում են սոցիալական անբարենպաստ միջավայրի հետ:

Չորրորդ ենթագլխում քննարկվում են մանկատան սաների կոնֆլիկտային փոխհարաբերություններին նպաստող գործոնների նախազգուշացման և հաղթահարման ուղիները: Մանկատան սաների միջև փոխհարաբերությունների կարգավորումն ու կառավարումը մենք դիտարկում ենք որպես սոցիալական կառավարման ասպեկտ, որ կիրառվում է սոցիոլոգիայում, իսկ հոգեբանության մեջ դեռևս հոգեբանական վերլուծության առարկա չի դարձել: Սաների անբարենպաստ փոխհարաբերությունների սոցիալական կառավարումը ենթադրում է խմբի կազմավորման սկզբունքների ու դրդապատճառների, խումբ համարվելու չափանիշների և զարգացվածության ցուցանիշների ձևավորումը, խմբում առաջացած սոցիալական խնդիրների և կոնֆլիկտների առանձնացումը, դրանց հաղթահարման ուղիները և մթնոլորտների մշակումը, խմբի հետագա կատարելագործման, արդյունավետ գործունեության և շփումների կանխատեսում, էական հիմնախնդիրների և տարածայնությունների կառուցողական կառուցողական լուծում, կոնֆլիկտների լուծման ամհատական մոտեցում և դրանց արդյունավետ իրականացում: Արդյունավետ կառավարումն ու կոնկրետ անբարենպաստ հարաբերությունների կարգավորումը պահանջում են այն գործոնների բացահայտումը, որոնք բերել են փոխհարաբերությունների խաթարումներին: Ընդհանրացնելով, կարելի է անել հետևյալ եզրահանգումը:

1. Մանկատան սաների միջև անբարենպաստ, կոնֆլիկտային հարաբերությունների նախագգուշացումը, կանխարգելումն ու հաղթահարումը անհրաժեշտաբար պահանջում է դրանց հոգեբանական պատճառականության ուսումնասիրություն և դրա հիման վրա անհատական համարժեք մոտեցման մեթոդների ու միջոցների ընտրություն:
2. Իրենց անցյալի կենսափորձով մանկատան սաները, ընկճված, նեղված, ներքին տազնապայնությամբ և հոգեկան խռովքով երեխաներ են զրկված ծնողական խնամքից և հոգածությունից, այդ պատճառով էլ նրանց նկատմամբ պետք է ցուցաբերել հանդուրժողականություն և ջերմ վերաբերմունք՝ նրանց սոցիալական ադապտացիան և սոցիալական կայունացումը հեշտ դարձնելու համար:
3. Լարված միջամծնային փոխհարաբերությունները հաղթահարելու համար նախ պետք է բացահայտել օբյեկտիվ անբարենպաստ պատճառները, որոնք նպաստել են նրանց կոնֆլիկտային վարքին, այնուհետև ախտորոշել նրանց ամծով պայմանավորված բացասական գծերը և այդ երկու խումբ գործոնները դիտարկել մի կոնտեքստում:
4. Երեխաների միջև առաջացած կոնֆլիկտային հարաբերությունների կանխարգելման և դրանց կառուցողական ընթացք տալու համար անհրաժեշտ է ապահովել մի շարք հոգեբանական պայմաններ, որոնցից ամենակարևորը հոգեբանական վստահության գծերի ստեղծելն է:
5. Մանկատանը ակնհայտորեն զգացվում է մտահաս մասնագետների աջակցության պակաս ինչի արդյունքում նվազում է սաների վարքային և հուզական խնդիրների հոգեշտկողական աշխատանքների էֆեկտիվությունը: Առանծնահատուկ ուշադրություն պետք է դարձնել սոցիալ-հոգեբանական աշխատանքների ռազմավարությանը, մասնավորապես մանկատան սաների առօրյայի, ինչպես նաև հոգեբանի, սոցիալական աշխատողի աշխատանքի բովանդակությանն ու բնույթին: Հոգեշտկողական աշխատանքների ժամանակ մանկատան սաները մեծ ոգևորությամբ էին ընդունում տարատեսակ խաղերի կազմակերպումը, որոնք ակնառու դրական ներգործություն ունեցան նրանց վարքի և հարաբերությունների վրա:
6. Ներգրավել մանկատան սաներին քաղաքային տարբեր միջոցառումներին, հատկապես ցուցահանդեսներին, տոնական միջոցառումներին, մրցույթային համերգներին, ինտելեկտուալ խաղերին, տեսահաղորդաշարերին և այլն: Նման մասսայական միջոցառումներին մասնակցությունը թույլ է տալիս մանկատան երեխային չզգալ իր «միայնակ լինելը»:
7. Մեծ կարևորություն ունի դպրոցի և մանկատան ադմինիստրացիայի համագործակցության փաստը: Մեր դիտումների արդյունքում պարզ դարձավ, որ մանկատան սաների առաջադիմության և հաճախելիության խնդիրը բաց է մնում ի շնորհիվ նրան, որ ծնողական ժողովների ժամանակ մանկատան ներկայացուցիչը չի

մասնակցում, մասնավարժական կոլեկտիվն էլ հետևողական չի գտնվում այդ հարցում: Հարկ ենք համարում ընդունել որպես ռազմավարական կարևորագույն ունեցող խնդիր մասնկատան սաների միջանձնային և միջխմբային հարաբերությունների կարգավորման համար:

8. Նպատակահարմար ենք համարում, որ ամսվա մեջ անգամ երեխաների ծնողների հետ հանդիպում կազմակերպվի, չնայած որ երեխան մասնկատանն է սակայն շատ են կարողում իրենց ծնողներին: Առաջարկ եղավ համագործակցել աշխատակազմի հոգեբանի, սոցիալական աշխատողի, աշխատել սոցիոգեբանական ծրագրի շրջանակներում:
9. Նպաստել այս ոլորտում գործող տարբեր հասարակական բարեգործական կազմակերպությունների, կամավորական խմբերի, անհատ երիտասարդների, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու երիտասարդաց շարժման կամավորների ներգրավվածությանը մասնկատան աշխատանքների կազմակերպմանը, երեխաների հետ շփման հարցում ինչը դրականորեն է անրադառնում նրանց հոգեվիճակի, հասարակության մեջ ակտիվորեն ինտեգրվելու գործընթացում:

Հետազոտության ընթացքն ու արդյունքների ամփոփումը հաստատեցին առաջադրված հիմնական վարկածը, ըստ որի ծնողագուրկ երեխաների կառուցողական միջանձնային և միջխմբային հարաբերությունների ձևավորումն ու դետրոնկտիվ դրսևորումների նախականիտումը պայմանավորված է ծնողագրության օբյեկտիվ պատճառականությունից (իրական և սոցիալական) բխող երեխայի անձնային-անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմամբ: Կապված ծնողագուրկ երեխաների օբյեկտիվ պատճառականության հետ (իրական և սոցիալական)՝ ենթադրվում է, որ իրական և սոցիալական ծնողագրության կարգավիճակում գտնվող երեխաները բնորոշվում են հոգեբանական տարաբնույթ և տարաբովանդակ բնութագրերով, սոցիալական ադապտացիայի, շփման և հաղորդակցության հմտություններով, միջանձնային և միջխմբային փոխհարաբերություններով: Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն են ընձեռնում կատարելու հետևյալ եզրակացությունները:

1. Անձի սոցիալականացման գործընթացում հաղորդակցության հմտությունների, միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների, սոցիալական դերերի յուրացման և ներքնայնացման համատեքստում վճռորոշ գործոն է առաջնային ռեֆերենտային խումբը՝ ընտանիքը, որի բացակայությամբ են պայմանավորված անձի սոցիալական վարքածերի աղճատումներն ու աղավաղումները, սոցիալ-հոգեբանական հասունության դժվարությունները:
2. Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված առաջնային ռեֆերենտային խմբի (ընտանիք) ամբողջական կամ մասնակի բացակայության պայմաններում երեխան հայտնվում է

- իրական կամ սոցիալական ծնողագրության կարգավիճակում, որոնցից յուրաքանչյուրը դրսևորվում է համապատասխան հոգեբանական և վարքագծային առանձնահատկություններով և յուրահատկություններով:
3. Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված թե՛ իրական և թե՛ սոցիալական ծնողագրության կարգավիճակներ կրողների շրջանում առանցքային է հուզական զգացմունքային գործոնը և աֆիլիատիվ պահանջումը, որոնք բացակայությամբ կամ գերակայությամբ խախտվում է երեխայի սոցիալականացման, հաղորդակցության ու շփման կառուցողական տարրերի ներդաշնակությունը:
 4. Երեխայի առջև ծառայած սոցիալ-հոգեբանական աղապատացիայի դժվարություններն ու վարքային նորագոյացությունները պատճառահետևանքային ուղիղ փոխկապվածության մեջ են գտնվում հուզական դեպրիվացիայի և պարբերաբար դրսևորվող ֆրուստրացիաների հետ, որոնք միանշանակորեն առաջ են բերում վարքային դեստրուկտիվ, հաճախմաս ասոցիալ դրսևորումներ:
 5. Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված թե՛ իրական և թե՛ սոցիալական ծնողագրության կարգավիճակներ կրողների շրջանում շփման, հաղորդակցության և միջանձնային հարաբերությունների դեստրուկտիվ դրսևորումները ածանցյալ են տագնապախռովության բարձր մակարդակի, անձի երկփեղկվածության և երկատվածության, անորոշության, կոնֆլիկտայնության և բարձր ագրեսիվության:
 6. Ծնողական խնամքից զուրկ գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական հասունացմանը նպաստելու և կյանքի հմտությունների ձևավորելու գործընթացում առաջնային նշանակություն է ձեռք բերում շտկողական, վերականգնողական աշխատանքների համալիր ծրագրերի իրականացումը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է

հրապարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Սիդելնիկովա Ռ.Վ., Մանկատան սաների անբարենպաստ փոխհարաբերությունների կարգավորման և կանխարգելման ուղիներ, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ «Մանկավարժություն» 2011, թիվ 8, էջ 23-26:
2. Սիդելնիկովա Ռ.Վ., Որբության հիմնախնդրի հետազոտությունը տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ, «Մանկավարժական միտք» Ձանգակ հրատարակչություն, 2012, թիվ 1-2, էջ 243-247:
3. Սիդելնիկովա Ռ.Վ., Մանկատան սաների փոխհարաբերությունները իբրև հոգեբանական հետազոտության հիմնախնդիր, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ»

Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես թիվ 2, «Ձանգակ-97», Երևան 2008, էջ 155-158:

4. Սիդելնիկովա Ռ. Վ., Մանկատան և հատուկ դպրոցի սաների արժեհամակարգի առանձնահատկությունները, Գիտական հոդվածներ, Մանկավարժություն և մեթոդիկա, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր-2012, էջ 130-138:
5. Сидельникова Р.В. Социогенные недостатки характера детей и психолого- педагогические пути их предупреждения, Социальные технологии в современном обществе, Материалы международной научной конференции четвертых Санкт- Петербургских социологических чтений. Санкт-Петербург, 2012, стр. 99-104.

СИДЕЛЬНИКОВА РИТА ВЯЧЕСЛАВОВНА

**ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
РЕГУЛИРОВАНИЯ МЕЖЛИЧНОСТНЫХ И
МЕЖГРУППОВЫХ ОТНОШЕНИЙ СИРОТ
ДЕТСКОГО ДОМА**

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 „Возрастная и педагогическая психология”.

Защита диссертации состоится 4 марта 2014 года в 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меци, 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ: Проблема детей-сирот оставшихся без попечения родителей, на современном этапе стала новой неблагоприятной социальной проблемой нашей реальности. Социальные и истинные сироты составляют основной контингент детских домов, число их постоянно растет из-за безответственности родителей. Семья как институт социальной защиты ребенка является источником передачи ребенку жизненного опыта. Потеря семьи тяжелейшая трагедия в жизни маленького ребенка, которая оставляет глубокий след в его душе и коренным образом меняет его судьбу, его отношение к окружающему миру, к сверстникам. Государство вынуждено брать на себя заботу о детях оставшихся без попечения родителей, затрачивая не малые средства на их содержание, однако главная актуальная проблема в данном исследовании это взаимоотношение межличностных межгрупповых психологических особенностей отношений детей сирот складывающихся в детском доме.

Основная цель исследования: Выявить психологические особенности межличностных межгрупповых взаимоотношений детей, оставшихся без попечения родителей, разработать научно-теоретические основы регулирования, коррегирования конфликтных взаимоотношений, исследовать объективные, субъективные трудности, возникшие в процессе социальной адаптации, поведении, общении, деятельности истинных и социальных сирот в детских домах, интернатах.

Научная новизна исследования: В научной работе исследуются вопросы конфликтных взаимоотношений в контексте разработки принципов методов и средств психологической работы с детьми, оставшихся без

попечения родителей, с точки зрения преодоления объективных трудностей, возникших при психологических особенностях общения, в условиях детских домов. А также взаимоотношения истинных и социальных сирот имеющих отклонения в поведении.

Теоретическая значимость исследования: Дети, оставшиеся без попечения родителей, являясь социальной педагогической запущенностью, являются главной научной задачей исследователей. Выделенные теоретические особенности, закономерности, полученные в процессе исследований взаимоотношений детей-сирот, расширяют и углубляют наши психологические представления о конфликтном поведении, ранняя профилактика неблагоприятных взаимоотношений детей-сирот, изучение объективных и субъективных причин взаимоотношений дает возможность избежать девиантного поведения детей в детских домах и ориентируют педагогов и психологов в изучении процесса развития детей, оставшихся без попечения родителей.

Достоверность и обоснованность теоретических и практических результатов: Обеспечены методологией, изучением теоретических и экспериментальных исследований по проблеме, достаточным объемом исследованного контингента, применением комплекса методик, адекватно поставленным исходным целям исследования.

Во ВВЕДЕНИИ обоснована актуальность проблемы, сформулирована гипотеза, цель, методы, объект и предмет исследования, раскрыта научная новизна, теоретическая и практическая значимость исследования, представлены основные положения, выносимые на защиту.

ПЕРВАЯ ГЛАВА „Психологическая проблема исследования взаимоотношений детей сирот детских домов” посвящена теоретическим и методологическим основам проблемы, историческому анализу исследований по проблеме.

Во ВТОРОЙ ГЛАВЕ „Экспериментальное исследование межличностных взаимоотношений детей-сирот детских домов” исследуются психологические особенности межличностных межгрупповых взаимоотношений детей-сирот детских домов, а также некоторые психологические факторы, способствующие нарушению адаптации, девиантного поведения, закономерности соотношения социального сиротства и истинного сиротства, исследуемого контингента.

В ТРЕТЬЕЙ ГЛАВЕ „Профилактика неблагоприятных взаимоотношений детей сирот и психологические пути регулирования” анализируются объективные, субъективные причины, препятствующие межличностным и межгрупповым взаимоотношениям детей-сирот, и детей лишенных родительского попечительства, психологические пути их преодоления и профилактика практических мероприятий, а также методические рекомендации для предотвращения поведенческих отклонений, нормальному взаимоотношению детей-сирот в детских домах.

Работа завершается общими выводами.

По теме диссертации опубликовано 5 статей.

RITA VYACHESLAV SIDELNIKOVA

**INTERPERSONAL AND INTERGROUP RELATIONS OF ORPHANS OF
THE ORPHANAGE AND PSYCHOLOGICAL FEATURES OF
REGULATION**

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in
specialty 19.00.05 “Age and pedagogical psychology”.

The defense of a thesis will be held at 12.00 on March 4th, 2014 at the session of the
specialized council 064 VAC in the framework of degrees awarding at Armenian
State Pedagogical University after Kh. Abovyan,
Address: 375010, Tigran Mets St. 17, Yerevan.

RESUME

The relevance of the research: The problem of orphans without parental care, at the present stage, has become a new unfavorable social problem of our reality. The orphanages are consisted mainly from group of social and true orphans. The number of orphans is constantly growing due to the irresponsibility of parents. Family as a social protection institution of a child is the source of transmission of the life experience to the child. The loss of family is a terrible tragedy in a life of child that leaves a deep impression on his soul and radically changes his destiny, his attitude towards the world and towards the peers. The state is obliged to take care of children without parental care by spending much money on their care. However, the main problem in this research is the psychological features of interpersonal and intergroup relationships between the children in the orphanage.

The main objective of the research: To identify the psychological features of the interpersonal and intergroup relationships of children without parental care; to develop a scientific and theoretical basis for regulation; a conflict relationship correction; to investigate the objective and subjective difficulties encountered in the process of social adaptation, behavior, communication of true and social orphans at the orphanages.

Scientific novelty of the research: In the scientific research the questions of conflict relationship between true and social orphans with deviant behavior have been investigated. In the context some principles and methods are revealed, as well as the means of psychological work with children without parental care in terms of overcoming the difficulties encountered by objective and subjective psychological features of the community in the case of orphanages.

The theoretical significance of the research: The children without parental care, being social and pedagogical fuzzy, are main scientific objective of the researchers. The distinguished theoretical aspects of patterns obtained in the research broaden and deepen our understanding of psychological conflict behavior of the orphans' relationship. The early prevention of unfavorable relationship of the orphans as well as the study of objective and subjective reasons of the relationship avoids the deviant behavior of children in the orphanages and orients teachers and psychologists in studying the process of development of children without parental care.

Reliability and validity of theoretical and practical results: The methodology as well as the study of theoretical and experimental studies on the problem has been provided. A sufficient volume of surveyed group, by using a set of techniques, adequately put the original aims of the research.

Introduction: The urgency of the problem has been formulated, also the hypothesis of the research, the purpose, the methods, the object and subject of the research, the scientific novelty and theoretical and practical significance of the research have been revealed as well as the basic positions have been presented for the defense.

First chapter: "The Psychological Problem of Investigation of the Children Relationship in the Orphanages" is devoted to theoretical and methodological basics of the problem as well as the historical analysis of the research on the problem.

Second chapter: "The Experimental Study of Interpersonal Relationship of the Children in the Orphanages" explores the psychological features of interpersonal and intergroup relationships of children in the orphanages, as well as some psychological factors contributing to the breach of adaptation, deviant behavior, the patterns of relations of social and true orphans the researched group.

The third chapter: "Prevention of Unfavorable Relationships of the Orphans and Psychological Ways of Regulation" analyzes the subjective and objective reasons which disturb the interpersonal and intergroup relationships of orphans and children deprived of parental care. The psychological way of overcoming and practical prevention activities, as well as the guidelines for the prevention of behavioral abnormalities, normal relations between orphans in the orphanages.

The thesis has been completed with general conclusions.

On the topic of the thesis five articles have been published.